ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» հոկտեմբերի 2024 թ. № 1039

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-006-1019-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,00049 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով և 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ, հաշվի առնելով, որ հողամասի վրա առկա է Արմինե Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական նշանակության շինության՝ խանութից 4,9 քառակուսի մետր մակերեսով հատված (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03102022-06-0042 վկայական), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 01/11.1/15500-2024 գրությունը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԹ/16362-2024 գրությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 01/111.3/08418-2024 գրությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060113ZMJMSS)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-1019-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,00049 հեկտար մակերեսով, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման

գործառնական նշանակության:

2. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-1019-0001 կադաստրային ծածկագրերով հողամասից առանձնացված 0,00049 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., Ս.Ավետիսյան փողոց, 3-րդ նրբանցք, 2» (փոստային դասիչը՝ 1801):

3. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե.Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 30
ք.Սպիտակ